ԼԻԼԻԹ ԱՎԴԱԼՅԱՆ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
Հոգեբան, իրավաբանական հոգեբանության
մագիստրոս

ՑՄԱՀ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդվածում քննարկվում են ցմահ դատապարտյալների էքզիստենցիալ դիրքորոշումների առանձնահատկությունները, ինչպես նաև՝ իրականացված փորձարարական հետազոտության արդյունքները:

Հիմնաբառեր - ցմահ դատապարտյալներ, էքզիստենցիալ դիրքորոշումներ, իմաստակենսական կողմնորոշումներ, էքզիստենցիալ մոտիվացիա, իմաստային դիրքորոշումներ, կյանքի իմաստ:

Ներածություն

Ժամանակակից հասարակությունում սոցիալական, քաղաքական, տնտեսական և մշակութային դժվարությունների հետ կապված նկատվում է հանցագործության մակարդակի բարձրացում: Ցմահ դատապարտումը հանգեցնում է դեսոցիալիզացիայի՝ կորցնում են նախկինում ձևավորված և արդեն իսկ հաստատված սոցիալական հմտությունները, շփման միջոցները, կողմնորոշումները, դիրքորոշումները: Հոգեբանական գիտության զարգացման ներկա փուլում դիտարկվում է՝ փակ համակարգերում անձի իմաստային կազմավորումները ուսումնասիրելու խնդիրը: Մինչդեռ, որոշակի հոգեբանական երևույթներ, ինչպիսիք են՝ «էքզիստենցիալ դիրքորոշումներ», «անձի հոգեբանական տարածք», «ցմահ դատապարտյալների էքզիստենցիալ ոլորտ», բավականաչափ ուսումնասիրված չեն: Չնայած, որ դրանց ուսումնասիրությունը շատ կարևոր է ցմահ դատապարտյալների էքզիստենցիալ ոլորտի վերլուծության համար:

Քննարկվող խնդրի արդիականությունը հիմնավորվում է նրանով, որ այս երևույթների էության մեջ ներթափանցումը թույլ կտա հասկանալ, թե ինչպես է դիրքորոշումը ազդում անձի կենսական տարածքի վրա, ինչպես է էքզիստենցիալ դիրքորոշումը ազդում անհատի գործունեության բնույթի վրա՝ փակ համակարգում:

Հետազոտության նպատակն է բացահայտել ցմահ դատապարտյալների էքզիստենցիալ դիրքորոշումների առանձնահատկությունները:

Հոդվածը բաղկացած է ներածությունից, հետազոտության մեթոդաբանությունից, հետազոտության արդյունքներից, եզրակացություններից և 5 անուն օգտագործված գրականության ցանկից:

Հետազոտության մեթոդաբանությունը: Հետազոտության համար տեսամեթոդաբանական հիմք են հանդիսացել Լ.Վ.Կարապետյանի և Օ.Մ.Պիսարովի, Ա.Մ.Կարասաևի կենսական դիրքորոշումների վերաբերյալ հայեցակարգերը, կյանքի իմաստի ուսումնասիրության Վ. Ֆրանկլի և Ա. Լենգլեի մոտեցումները, Ա.Լենգլեի էքզիստենցիալ դիրքորոշումների և Ե.Ի.Մեշչերյակովայի դատապարտյալների իմաստային դիրքորոշումների վերաբերյալ հայեցակարգերը, ինչպես նաև պատճառականության, սոցիալական պայմանավորվածության, գիտակցության և գործունեության միասնության հոգեբանական սկզբունքները: Հետազոտության ժամանակ կիրառվել են թեստավորման, հարցարանի, անկետայի, փաստաթղթային վերլուծության, զրույցի, մաթեմատիկական-վիճակագրական առաջնային և երկրորդային վերլուծության մեթոդներ: Առաջնային մեթոդներից կիրառվել է ընտրական միջինը և ընտրական միջինից շեղումը: Ընտրական միջինը՝ որպես վիճակագրական ցուցանիշ, կիրառվել է ուսումնասիրվող հատկության զարգացման աստիճանը համապատասխան ընտրակազմում գնահատելու նպատակով: Միջին քառակուսային շեղումը ցույց է տալիս հատկանիշի ցրվածությունը միջին արժեքի շուրջ: Եթե ցրումը փոքր է, շարքի անդամների արժեքները խմբված են միջին արժեքի շուրջ: Եթե ցրումը մեծ է, շարքի անդամների արժեքները խմբված չեն միջին արժեքի շուրջ, տատանումը մեծ է: Երկրորդային մեթոդներից կիրառվել է Կ. Պիրսոնի կորելյացիոն վերլուծության մեթոդը:

Հետազոտությունները կրել են խմբային և անհատական բնույթ՝ կախված մեթոդիկաների պահանջներից: Մեթոդիկաների ընտրությունը բխել է հետազոտության առարկայից, նպատակից և խնդիրներից: Մեթոդներն ու մեթոդիկաներն ընտրելիս հաշվի են առնվել հետևյալ չափանիշները. մեթոդի համարժեքությունը հետազոտության օբյեկտին և խնդիրներին, վստահելիությունը, համապատասխանությունը գիտական հետազոտությունների ժամանակակից մակարդակին և հետազոտության տրամաբանական կառուցվածքին: Ընտրվել են այնպիսի մեթոդիկաներ, որոնք հոգեբանական գիտության մեջ բավականաչափ հայտնի են և կի-

www.ardaradatutyunjournal.com

րառված:

Ցմահ դատապարտյալների էքզիստենցիալ դիրքորոշումները ուսումնասիրվել են Ն.Գ.Միլորոդովայի և Ա.Դ.Իշկովի «Հիմնային իմաստային դիրքորոշումներ»[4], Վ.Բ.Շումսկու, Ե.Մ.ՈՒկոլովայի, Ե.Ն.Օսինի, ՅԱ.Դ.Լուպադինայի «Էքզիստենցիալ մոտիվացիա»[5], Վ.ՅՈՒ.Կատլյակովի «Կյանքի իմաստների համակարգ»[2], Ա.Լեոնտևի «Իմաստակենսական կողմնորոշումներ»[3] և Ե.Ն.Օսինի «Կյանքի իմաստ»[1] մեթոդիկաներով:

Կատարվել է ստացված տվյալների մշակում մաթեմատիկական մեթոդներով, ապա դրանց տեսական վերլուծություն և պատճառահետևանքային կապերի հոգեբանական մեկնաբանություն:

Հետազոտությունն իրականացվել է 2022թ.-ի փետրվար ամսին: Հետազոտությանը մասնակցել են Արմավիր և Նուբարշեն քրեակատարողական հիմնարկների 30-60 տարեկան 40 ցմահ դատապարտյալներ:

Ցմահ դատապարտյալների էքզիստենցիալ դիրքորոշումների եվ կյանքի իմաստի փորձարարական ուսումնասիրություն: Ցմահ դատապարտյալների իմաստային դիրքորոշումների ուսումնասիրության արդյունքները: Ցմահ դատապարտյալների հիմնային իմաստային դիրքորոշումների՝ Ն.Գ.Միլորոդովայի և Ա.Դ.Իշկովի մեթոդիկայով կատարված մեր հետազոտության արդյունքում բացահայտել ենք ցմահ դատապարտյալների հիմնային իմաստային դիրքորոշումները: Ընտրակազմում հաշվարկել ենք յուրաքանչյուր սանդղակի տոկոսային (շատ բարձր, բարձր, միջին, ցածր և շատ ցածր մակարդակները) և միջին վիճակագրական ցուցանիշները (հաշվարկել ենք յուրաքանչյուր սանդղակի միջին վիճակագրական ցուցանիշը):



Նկ. 1. Ցմահ դատապարտյալների մոտ «Իմաստային դիրքորոշումներ» մեթոդիկայի սանդղակների միջին ցուցանիշներ

Նկ. 1-ում ներկայացված են ցմահ դատապարտյալների իմաստային դիրքորոշումների գնահատման միջինացված կարգերը: Ցմահ դատապարտյալների մոտ առաջին տեղում է «պատասխանատվությունն ուրիշների համար» սանդղակը, երկրորդ տեղում է «պահանջկոտությունը սեփական անձի նկատմամբ», երրորդ տեղում «հուզական կախվածություն», չորրորդ տեղում «կախվածությունն հաջողություններից» սանդղակը, հինգերորդ տեղում «վերբալ կախվածություն» սանդղակը, վեցերորդ տեղում «պահանջկոտություն ուրիշների նկատմամբ» սանդղակը և վերջին յոթերորդ տեղում «պատասխանատվություն սեփական անձի համար» սանդղակը:

Ստացված արդյունքներից եկանք այն եզրահանգման, որ ցմահ դատապարտյալների մոտ ուրիշների համար պատասխանատվության զգացումը բարձր է: Կան անհատական տարբերություններ՝ մի մասն ունեն պահանջկոտության բարձր մակարդակ սեփական անձի նկատմամբ, սակայն միևնույն ժամանակ պատասխանատվությունը սեփական անձի համար ցածր է, նրանց մոտ առկա է ֆատալիզմ, կարծում են, որ իրենց հետ տեղի ունեցողը արտաքին հանգամանքների արդյունք է և իրենք ի վիճակի չեն վերահսկել տեղի ունեցողը:

Ցմահ դատապարտյալների էքզիստենցիալ մոտիվացիայի ուսումնասիրության արդյունքները: Ցմահ դատապարտյալների էքզիստենցիալ մոտիվացիայի՝ Վ.Բ.Շումսկու մեթոդիկայով կատարված մեր հետազոտության արդյունքում բացահայտել ենք՝ ցմահ դատապարտյալների ֆունկցիոնալ էքզիստենցիալ դրդապատճառները և ընդհանուր էքզիստենցիալ իրականացումը: Ընտրակազմում հաշվարկել ենք յուրաքանչյուր սանդղակի տոկոսային (բարձր, միջին և ցածր մակարդակները) և միջին վիճակագրական ցուցանիշները (հաշվարկել ենք յուրաքանչյուր սանդղակի միջին վիճակագրական ցուցանիշը):

Նկ. 2-ում ներկայացված են ցմահ դատապարտյալների էքզիստենցիալ մոտիվացիայի գնահատման միջինացված կարգերը:

www.ardaradatutyunjournal.com



Նկ. 2. Ցմահ դատապարտյալների մոտ «Էքզիստենցիալ մոտիվացիա» մեթոդիկայի սանդղակների միջին ցուցանիշներ

Ցմահ դատապարտյալների մոտ «Էքզիստենցիալ մոտիվացիա» մեթոդիկայի սանդղակների միջին վիճակագրական ցուցանիշների արդյունքներից պարզ է դառնում, որ ցմահ դատապարտյալների մոտ առաջին տեղում է «ինքնաարժեզրում» սանդղակը, երկրորդ տեղում «կյանքի իմաստ» սանդղակը, երրորդ տեղում «բազային արժեք» սանդղակը և չորրորդ տեղում «բազային վստահություն» սանդղակը: Բոլոր չորս մոտիվացիաները վերապրվում են, իսկ էքզիստենցիալ իրականացումը բարձր մակարդակի է (տե՛ս նկ. 2):

Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ ցմահ դատապարտյալների մոտ գերակշռում էին բարձր ցուցանիշները, իսկ ցածր ցուցանիշ գրանցվել էր միայն մեկ սանդղակում: Նրանք ունեն բավարար արժեքներ, որոնք ձգտում են պահպանել և պաշտպանել, և դրական դիրքորոշում ունեն իրենց կյանքի նկատմամբ: Ինքնուրույն են, կարողանում են պնդել, պաշտպանել և պահպանել իրենց «ես»-ը:

Ցմահ դատապարտյալների կյանքի իմաստի ուսումնասիրության արդյունքները: Ցմահ դատապարտյալների իմաստակենսական կողմնորոշումների՝ Ա.Լեոնտևի մեթոդիկայով կատարված մեր հետազոտության արդյունքում բացահայտել ենք ցմահ դատապարտյալների կյանքի իմաստի «աղբյուրը»: Ընտրակազմում հաշվարկել ենք յուրաքանչյուր ենթասանդղակի տոկոսային (բարձր, միջին և ցածր մակարդակները) և միջին վիճակագրական ցուցանիշները (հաշվարկել ենք յուրաքանչյուր ենթասանդղակի միջին վիճակագրական ցուցանիշը):

Նկ. 3-ում ներկայացված են ցմահ դատապարտյալների իմաստակենսական կողմնորոշումների գնահատման միջինացված կարգերը:



Նկ. 3. Ցմահ դատապարտյալների մոտ Ա.Լեոնտևի «Իմաստակենսական կողմնորոշումներ» մեթոդիկայի ենթասանդղակների միջին ցուցանիշներ

Ցմահ դատապարտյալների մոտ «Իմաստակենսական կողմնորոշումներ» մեթոդիկայի սանդղակների միջին վիճակագրական ցուցանիշների արդյունքներից պարզ է դառնում, որ ցմահ դատապարտյալների մոտ «նպատակները կյանքում» ենթասանդղակը գտնվում է առաջին տեղում, որից հետո՝ «կյանքի վերահսկողության ուղղվածություն» ենթասանդղակը, երրորդ տեղում «կյանքի արդյունավետություն» ենթասանդղակն է, չորրորդ տեղում՝ «կյանքի ընթացք» ենթասանդղակը և հինգերորդ տեղում՝ «ես-ի վերահսկողության ուղղվածություն» ենթասանդղակը (տե՛ս նկ. 3):

Ցմահ դատապարտյալների կյանքի իմաստի ընդհանուր մակարդակը բարձր է՝ անկախ այն հանգամանքից, որ նրանք գտնվում են անազատության պայմաններում, միևնույն է նրանք իրենց կյանքի արդյունավետությունը գնահատում են դրական, ունեն նպատակներ, որոնք համարում են իրագործելի ապագայում:

Նկ. 4-ում ներկայացված են ցմահ դատապարտյալների կյանքի իմաստների համակարգի գնահատման միջինացված կարգերը:



Նկ. 4. Ցմահ դատապարտյալների մոտ Վ.ՅՈՒ.Կատլյակովի «Կյանքի իմաստների համակարգ» մեթոդիկայի սանդղակների միջին ցուցանիշներ

Ցմահ դատապարտյալների մոտ «Կյանքի իմաստների համակարգ» մեթոդիկայի սանդղակների միջին վիճակագրական ցուցանիշների արդյունքներից պարզ է դառնում, որ առաջին տեղում են ընտանեկան իմաստները, երկրորդ տեղում՝ էքզիստենցիալ, երրորդ տեղում՝ հաղորդակցական, չորրորդ տեղում՝ ինքնաիրականացման, հինգերորդ տեղում՝ ճանաչողական, վեցերորդ տեղում՝ այլասիրական, յոթերորդ տեղում՝ կարգավիճակային, և վերջին տեղում՝ հեդոնիստական իմաստները (տե՛ս նկ. 4):

Այսպիսով կարող ենք ասել, որ ցմահ դատապարտյալների համար ամենաանկարևորը հեդոնիստական կյանքի իմաստն է, այս սանդղակում ցածր միավորներ ընդհանրապես չէին գրանցվել, իսկ ամենակարևոր իմաստը դա ընտանեկանն է:

Նկ. 5-ում ներկայացված են ցմահ դատապարտյալների կյանքի իմաստի համակարգի գնահատման միջինացված կարգերը



Նկ. 5. Ցմահ դատապարտյալների մոտ Ե.Ն.Օսիսնի «Կյանքի իմաստ» մեթոդիկայի սանդղակների միջին ցուցանիշները

Ցմահ դատապարտյալների մոտ «Կյանքի իմաստ» մեթոդիկայի սանդղակների միջին վիճակագրական ցուցանիշների արդյունքներից պարզ է դառնում, որ ցմահ դատապարտյալների մոտ կյանքի իմաստի ընդհանուր ցուցիչը բարձր մակարդակի է (տե՛ս նկ. 5):

Անհատական վերլուծությունները ցույց են տալիս, որ այն ցմահ դատապարտյալները ում մոտ կյանքի իմաստի առկայությունը բարձր մակարդակի է, կյանքի իմաստի որոնումը ցածր մակարդակի է:

Համահարաբերակցային վերլուծության արդյունքում նկատվել են հետևյալ տարբերությունները.

Այն ցմահ դատապարտյալները ովքեր ունեն պատասխանատվության զգացում ուրիշների համար, առաջնորդվում են ընտանեկան կյանքի իմաստով: Անհատական վերլուծությունները ցույց

www.ardaradatutyunjournal.com

են տալիս, որ գրեթե բոլոր ցմահ դատապարտյալների մոտ. անկախ այն հանգամանքից, արդյո՞ք նրանք ընտանիք ունեն թե ոչ, առաջնային կարգում, բոլոր մեթոդիկաների մեջ ընտանիքն է: Կարող ենք ենթադրել, որ դա տարիքային առանձնահատկություն է, որովհետև հետազոտվողների մեծ մասի տարիքը համապատասխանում է այն տարիքին, երբ անձը ընտանիք է կազմում կամ արդեն ունի ընտանիք: Իսկ մյուս մասը միգուցե չունեն ընտանիք, բայց զգում է դրա կարիքը, և ուզում է ստեղծել ընտանիք, այդ իսկ պատճառով այն բարձր ռանգ ունի:



Նկ. 6. Ցմահ դատապարտյալների մոտ «Իմաստային դիրքորոշումներ» մեթոդիկայի «Պատասխանատվություն ուրիշների համար» սանդղակի տոկոսային ցուցանիշները

«Պատասխանատվությունն ուրիշների համար» սանդղակի ցուցանիշները շատ ցածր են 7%-ի, ցածր 5%-ի, շատ բարձր 33%-ի, բարձր 40%-ի և միջին 15%-ի մոտ (տե՛ս նկ. 6):

Ցմահ դատապարտյալների մոտ ընտանեկան իմաստներ սանդղակի ցուցանիշները միջին է 52%-ի, ցածր 48%-ի, իսկ բարձր միավորներ ոչ ոքի մոտ չեն գրանցվել (տե՛ս նկ. 7):



Նկ. 7. Ցմահ դատապարտյալների մոտ Վ.ՅՈՒ.Կատլյակովի «Կյանքի իմաստների համակարգ» մեթոդիկայի «ընտանեկան» կյանքի իմաստի տոկոսային ցուցանիշները

Ցմահ դատապարտյալների մոտ դրական հարաբերակցային կապ է բացահայտվել ինքնաարժեորում և «ես»-ի վերահսկողության ուղղվածություն խմբերի միջև (r=0,307, երբ p≤0,05), Ինքնաարժեվորում էքզիստենցիալ մոտիվացիան «ես»-ը դարձնում է ավելի ուժեղ, հնարավորություն է տալիս պատասխանատու և ինքնուրույն որոշումներ կայացանել և ազատ ընտրություն կատարել սեփական կյանքը կառավարելու հարցում:



Նկ. 8. Ցմահ դատապարտյալների մոտ Վ.Բ.Շումսկիի «Էքզիստենցիալ մոտիվացիա» մեթոդիկայի «Ինքնաարժեորում» սանդղակի տոկոսային ցուցանիշները



Նկ. 9. Ցմահ դատապարտյալների մոտ Ա. Լեոնտևի «Իմաստակենսական կողմնորոշումներ» մեթոդիկայի «ես-ի վերահսկողության ուղղվածություն» ենթասանդղակի տոկոսային ցուցանիշները

Ինքնաարժեզորում սանդղակի ցուցանիշները բարձր են 65%-ի և միջին 35%-ի մոտ (տե՛ս նկ. 8): Այն ցմահ դատապարտյալները ում մոտ բարձր միավորներ են գրանցվել ցույց է տալիս, որ նրանք կարողանում են երկխոսության մեջ մտնել սեփական անձի հետ, գնահատել իրենց զգացմունքները և որոշակի դիրքորոշում ընդունել դրանց նկատմամբ: Ինքն իրեն գնահատելու և իր մասին դատողություններ անելու սեփական կարողության հանդեպ վստահությունը պաշտպանում է իր «ես»-ը և դարձնում այն ուժեղ: Ինքնաճանաչումը հնարավորություն է տալիս նրանց տեսնել ուրիշի անհատականությունը, սեփական յուրահատկության նկատմամբ հարգանքը հանգեցնում է ուրիշի անհատականության նկատմամբ հարգալից վերաբերմունքի: Անհատականության նման զարգացումը խոսում է նրանց հասունության մասին: Այդպիսի մարդն ինքն իր հետ հարաբերություններում հստակություն ունի, ազատորեն կարող է ընկալել իր դիրքորոշումը և կայացնել պատասխանատու որոշումներ: Միջին մակարդակ գրանցած ցմահ դատապարտյալները ինքնուրույն են, կարողանում են պաշտպանել սեփական ես-ը:

«Ես-ի վերահսկողության ուղղվածություն» ենթասանդղակի ցուցանիշները ցմահ դատապրատյալների 48%-ի մոտ բարձր մակարդակի է, 50%-ի մոտ միջին և 2%-ի մոտ ցածր (տե՛ս նկ.9):

Բարձր ցուցանիշներ գրանցած դատապարտյալները իրենք իրենց համարում են ուժեղ անձնավորություն, ով ունի ընտրության ազատություն, որպեսզի կառուցի իր կյանքը համապատասխան իր նպատակների և խնդիրների:

Ցածր բալեր գրանցած ցմահ դատապարտյալները թերհավատությամբ են վերաբերվում սեփական ուժերին՝ սեփական կյանքը կառավարելու հարցում:

Եզրակացություն: Տեսական և հետազոտական վերլուծությունները հնարավորություն են տալիս հանգելու հետևյալ եզրակացություններին.

• Էքզիստենցիալ դիրքորոշումների վերաբերյալ կան տարբեր տեսական մոտեցումներ. մասնավորապես՝

o Էքզիստենցիալ դիրքորոշումը կապված է մարդու հոգևոր բաղադրիչի զարգացման հետ, որը թույլ է տալիս մարդուն հասկանալ կյանքի իրավիճակի էությունը և, հենվելով բարձրագույն արժեքների վրա, կառուցողականորեն հաղթահարել կյանքի դժվարությունները: Էքզիստենցիալ դիրքորոշումները արտահայտում են մարդու գոյության իմաստը:

• Ուրիշների համար պատասխանատվության և սեփական անձի համար պահանջկոտության իմաստային դիրքորոշումները նշանակալի են ցմահ դատապարտյալների համար: Ցմահ դատապարտյալների մոտ հիմնականում գերակշռում է իմաստային դիրքորոշումների ադեկվատ մակարդակը:

• Ցմահ դատապարտյալների կողմից էքզիստենցիալ մոտիվացիաները վերապրվում են, եթե էքզիստենցիալ իրականացումը բարձր մակարդակի է: Նրանք ունեն անհրաժեշտ նախադրյալներ՝ դիմանալու և ընդունելու իրենց գոյության պայմանները, հաղթահարելու անորոշությունը, վախն ու անհանգստությունը:

• Ցմահ դատապարտյալներն իրենց կյանքը հուզականորեն հագեցած են համարում, արժեքների ապրման շնորհիվ մասնավորապես՝ ընտանիք, սեր, հավատարմություն, զգում են կյանքի հոսքը:

• Ցմահ դատապարտյալների կյանքի իմաստի ընդհանուր մակարդակը բարձր է, անկախ այն հանգամանքից, որ նրանք գտնվում են անազատության պայմաններում, միևնույն է նրանք իրենց կյանքի արդյունավետությունը գնահատում են դրական, ունեն նպատակներ, որոնք համարում են իրագործելի ապագայում՝ միայն ՔԿՀ-ի սահմաններից դուրս, ոմանք էլ կարողանում են իրենց որոշ նպատաներ իրագործել ՔԿՀ-ում:

• Իմաստային դիրքորոշումները և կյանքի իմաստները գտնում են փոխադարձ կապի մեջ:

o Հաջողություններից կախվածություն ունեցող ցմահ դատապարտյալների մոտ առկա է կարգավիճակային կյանքի իմաստ:

www.ardaradatutyunjournal.com

o Այն ցմահ դատապարտյալները ովքեր ունեն ուրիշների համար պատասխանատվության բարձր զգացում, առաջնորդվում են ընտանեկան կյանքի իմաստով: Ցմահ դատապարտյալները հատկապես պատասխանատու են համարում իրենց ընտանիքի անդամների համար:

o Սեփական անձի նկատմամբ պահանջկոտության ցածր մակարդակ ունեցող ցմահ դատապարտյալները իրենց առջև նպատակներ չեն դնում և չեն կարևորում ոչ միայն հետագա ապագան այլև ազատությունը:

o Այն ցմահ դատապարտյալները ովքեր սեփական անձի համար պատասխանատվությունը բարձր են գնահատում, առկա է ֆատալիզմ, նրանք կարծում են, որ կյանքը ենթակա չէ վերահսկողության, իսկ մյուս մասը կարծում է, որ կարող է կառավարել իր կյանքը:

• Այսպիսով ցմահ դատապարտյալների էքզիստենցիալ դիրքորոշումները և կյանքի իմաստը գտնվում են փոխադարձ կապի մեջ, այս կամ այն կյանքի իմաստի նախապատվությունը, որոշում է նրանց էքզիստենցիալ դիրքորոշումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Елшанский С.П., Ануфриев А.Ф., Камалетдинова З.Ф., Сапарин О.Е., Семенов Д.В. Психометрические показатели русскоязычной версии теста «Опросник смысла жизни» (MLQ) // Психология, социология и педагогика. 2015. № 10 [Электронный ресурс]. URL: https://psychology.snauka.ru/2015/10/6019 (дата обращения: 13.02.2022).
2. Котляков В.Ю. Методика исследования системы жизненных смыслов «Сибирская психология сегодня: Сборник научных трудов». - Вып. 2. - Кемерово: Кузбассвузиздат, 2003. - 410 с.
3. Леонтьев Д.А. Тест смысложизненных ориентаций (СЖО). 2-е изд. — М.: Смысл, 2000. — 18 с.
4. Милорадова Н.Г. Психология и педагогика: Учебник. – М.: Гардарики, 2005. 174-180 с.
5. Шумский В.Б., Уколова Е.М., Осин Е.Н., Лупандина Я.Д. Диагностика экзистенциальной исполненности: оригинальная русскоязычная версия теста экзистенциальных мотиваций. Психология. Журнал Высшей школы экономики, 2016. Т. 13. No 4. 763–788 с.

Лилит Авдалян
Уголовно-исполнительная служба МЮ РА,
Психолог, магистр юридической психологии

РЕЗЮМЕ
Особенности экзистенциальных установок пожизненно осужденных

В статье рассматриваются особенности экзистенциальных установок пожизненно осужденных, а также результаты проведенного экспериментального исследования.

Ключевые слова: пожизненно осужденные, экзистенциальные установки, смысложизненные ориентации, экзистенциальная мотивация, смысловые установки, смысл жизни.

Lilit Avdalyan
Criminal-executive institution (Ministry of Justice of the Republic of Armenia),
Psychologist, Master of Legal Psychology

SUMMARY
The specificities of existential attitudes in life-sentenced convicts

The article discusses the existential attitudes of life-sentenced convicts, as well as the results of the conducted experimental research.

Key words: life-sentenced convicts, existential attitudes, meaning-of-life orientations, existential motivation, meaning attitudes, meaning of life.

Ընդունվել է տպագրության 25.02.26թ.